

Հաստատում եմ

Հայաստանի Հանրապետության  
կրթության և գիտության նախարարության  
գիտության պետական կոմիտեի նախագահ  
Սամվել Հարությունյան

  
(ստորագրություն)  
Կ. Տ.

## ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԵՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ  
ՄԻՋԵՎ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ  
ՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ  
ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը, այսուհետ՝ ՀԱՊՀ, ի դեմս ռեկտոր Ոստանիկ Մարությանի, որը գործում է ՀԱՊՀ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ ՀԱԷԿ, ի դեմս գլխավոր տնօրեն Մովսես Վարդանյանի, որը գործում է ՀԱԷԿ-ի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ՝ միասին՝ Կողմեր,

ցանկանալով համատեղել ջանքերը միջուկային և ռադիոակտիվ նյութերի տեխնիկական և քրեագիտական փորձաքննության բնագավառներում գիտական և գիտակրթական աշխատանքների իրականացման, կադրերի պատրաստման և վերապատրաստման, այդ թվում՝ մագիստրոսական և ասպիրանտական կրթական

ծրագրերի մշակման և ներդրման, ինչպես նաև միջազգային նախագծերի իրականացման ուղղությամբ,

հիմք ընդունելով 2017 թվականի փետրվարի 22-ից 23-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ, քաղաք Վաշինգտոնում միջուկային փորձաքննության հայաստանյան և ամերիկյան փորձագետների միջև կայացած հանդիպման արձանագրությունը,

կնքեցին սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը համաձայնվեցին ստեղծել Միջուկային և ռադիոակտիվ նյութերի տեխնիկական և քրեագիտական փորձաքննության համատեղ լաբորատորիա, այսուհետ՝ Լաբորատորիա՝ ՀԱՊՀ-ի Միջուկային անվտանգության տարածաշրջանային ուսումնական կենտրոնի և ՀԱԷԿ-ի Արտաքին ճառագայթային հսկողության լաբորատորիայի ռեսուրսների օգտագործմամբ:

2. Լաբորատորիան ստեղծվում է Կողմերի կողմից միջուկային ռադիոակտիվ նյութերի տեխնիկական և քրեագիտական փորձաքննության բնագավառներում իրականացվող գիտական և գիտակրթական աշխատանքների համատեղման, նշված բնագավառներում Հայաստանի Հանրապետությունում կատարվող հետազոտությունների համակարգման, դրանց արդյունավետության ու միջազգային ճանաչելիության մակարդակի բարձրացման նպատակով:

3. Լաբորատորիայի գործունեությունն իրականացվում է կանոնադրության հիման վրա, որը սահմանված կարգով հաստատվում է Կողմերի կողմից:

4. Լաբորատորիայի գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնական ուղղություններն են՝

1) միջուկային և ռադիոակտիվ նյութերի տեխնիկական և քրեագիտական փորձաքննություն,

2) հսկողությունից կամ գործածությունից դուրս գտնվող ռադիոակտիվ աղբյուրների որոնում, հայտնաբերում և վնասազերծում,

3) միջուկային, քիմիական, կենսաբանական, ռադիոակտիվ նյութերի քիմիական, իզոտոպային և մորֆոլոգիական վերլուծություն,

4) Հայաստանի Հանրապետությունում միջուկային էներգետիկայի հեռանկարային զարգացման գիտական և գիտատեխնիկական վերլուծություն,

5) Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ թափոնների վերամշակման և երկարաժամկետ պահման հետ կապված հարցերի միջազգային փորձի վերլուծություն,

6) ռադիացիոն, մաքսային անվտանգության և միջուկային քրեագիտության բնագավառում ճշգրիտ չափումների համար միջուկային սարքաշինության ուղղությունների մշակում և զարգացում,

7) միջուկային դետեկտորների տրամաչափում,

8) միջուկային ռեակցիաների ուսումնասիրություն նեյտրոնային փնջերով,

9) միջուկային ահաբեկչության դեմ պայքարի համաշխարհային նախաձեռնության մասնակցություն,

10) միջուկային կամ ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումները կանխելու, հայտնաբերելու և այդպիսի միջադեպերի արձագանքմանն ուղղված աշխատանքների մասնակցություն,

11) միջուկային վերահսկման-կանոնակարգման բարելավմանն ուղղված աշխատանքների մասնակցություն,

12) միջուկային փորձաքննության միջազգային տեխնիկական աշխատանքային խմբի աշխատանքների մասնակցություն:

5. Լաբորատորիայի հիմնական խնդիրներն են միջուկային ռադիոակտիվ նյութերի տեխնիկական և քրեագիտական փորձաքննության բնագավառներում՝

1) գիտական, գիտատեխնիկական և գիտակրթական ծրագրերի մշակում և իրականացում,

2) ուսումնական, այդ թվում՝ մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրերի մշակում և ներդրում,

3) գիտական և (կամ) գիտակրթական դրամաշնորհային նախագծերի պատրաստում և իրականացում,

4) գիտական միջոցառումների, այդ թվում՝ գիտաժողովների, երիտասարդական դպրոցների կազմակերպում:

6. Լաբորատորիան իր խնդիրների իրականացման համար համագործակցում է Հայաստանի Հանրապետության շահագրգիռ գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:

7. Լաբորատորիայի նյութատեխնիկական բազան հասանելի է Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում գործող գիտական կազմակերպությունների, Երևանի պետական համալսարանի, Ա. Ի. Ալիխանյանի անվան

ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) և Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտի՝ գիտական, գիտատեխնիկական և գիտակրթական գործունեություն իրականացնելու նպատակով:

8. Լաբորատորիայի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0911, Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր:

9. Լաբորատորիայի գույքի և ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են՝

1) Կողմերի կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը,  
2) Կողմերի կողմից իրենց աշխատակիցներին հատկացված աշխատանքի վարձատրության միջոցները,

3) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն,

4) դրամաշնորհները,

5) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրները:

10. Սույն Հուշագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

11. Կողմերը պարտավորվում են գաղտնի պահել մյուս Կողմից ստացված յուրաքանչյուր տեղեկատվություն սույն Հուշագրի և վերջինիս հիման վրա կնքված այլ փաստաթղթերի շրջանակներում:

12. Կողմերը իրավասու են հրապարակել սույն Հուշագրի կատարման մասին տեղեկատվությունն իրենց պաշտոնական կայքում:

13. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է 5 (հինգ) տարի ժամկետով: Գործողության ժամկետը ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ 5 (հինգ) տարի ժամկետով, եթե Կողմերից որևէ մեկը ժամկետի ավարտից առնվազն 3 ամիս առաջ մյուս կողմին գրավոր կերպով չձանուցի սույն Հուշագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

14. Յուրաքանչյուր Կողմն իրավասու է միակողմանի կարգով վաղաժամկետ դադարեցնելու սույն Հուշագիրը՝ գրավոր ծանուցելով այդ մասին մյուս Կողմին առնվազն տասը օրացուցային օր առաջ մինչև ենթադրյալ դադարեցման ամսաթիվը:

15. Սույն Հուշագրի տեքստում ցանկացած փոփոխություն համարվում է վավեր, եթե այն կատարված է գրավոր ձևով՝ ստորագրված Կողմերի կողմից:

16. Սույն Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով՝ հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 3 (երեք) օրինակից՝ Կողմերից յուրաքանչյուրին՝ մեկական օրինակ և մեկ օրինակ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեին:

Կատարված է ք. Երևան, 2017թ. օգոստոս «1»-ին:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Ոստանիկ Մարուխյան

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Մովսես Վարդանյան

